ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2335-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.02.20/9(464) Հոդ.221	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	29.12.2005
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	25.01.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	04.02.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02.03.2006	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆՎԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՀՀ-ԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՀ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
4 փետրվարի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2005 թվականի N 2335-Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆՎԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 10.09.09 N 1079-Ն, 27.04.17 N 428-Ն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի նվազագույն չափը և պետական ու համայնքային բյուջեների միջոցներից հատկացվող գործուղման ծախսերի նվազագույն և առավելագույն չափերը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) գործուղման վկայականի օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

դ) օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

ե) օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողին օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

զ) օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

է) օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար տրամադրվող գումարի չափը՝ համաձայն N 7 հավելվածի:

N 7 հավելվածում նշված գումարի չափն ավելացվում է հինգ տոկոսի չափով՝ յուրաքանչյուր երեխայի համար, իսկ օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարների համար վարձակալվող բնակարանների վարձավճարի չափը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

(1-ին կետը լրաց. 10.09.09 N 1079-Ն, 04.03.10 N 239-Ն, փոփ. 27.04.17 N 428-Ն)

1.1. Սույն որոշումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գործուղված աշխատողների վրա:

(1.1-ին կետը լրաց. 24.08.06 N 1422-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2006 թ. հունվարի 25
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 27.04.17 N 428-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են գործուղման մեկնած աշխատողներին գործուղման ծախսերի հատուցման հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը փոփ. 10.01.13 N 8-Ն, 27.04.17 N 428-Ն)

2. Գործուղումը գործատուի կամ նրա ներկայացուցչի կողմից աշխատողի աշխատանքի հիմնական վայրից (քաղաք,

գյուղ) դուրս որոշակի ժամկետով այլ վայրում աշխատանք կատարելու հանձնարարություն է:

(2-րդ կետը փոփ., լրաց. 27.04.17 N 428-Ն)

3. Աշխատողները գործուղման մեկնում են գործատուի անհատական իրավական ակտի համաձայն, որում նշվում են գործուղման վայրը (վայրերը՝ քաղաք, գյուղ), կազմակերպության անվանումը, նպատակը և ժամկետները: Անհատական իրավական ակտի հիման վրա ձևակերպվում է գործուղման վկայականը (բացի օտարերկրյա գործուղումներից), որն ստորագրվում և կնքվում է գործատուի կամ նրա ներկայացուցչի կողմից:

(3-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն, 27.04.17 N 428-Ն)

4. Գործուղման ժամանակահատվածում աշխատողի աշխատանքի հիմնական վայրից մեկնելու, գործուղման վայր ժամանելու, գործուղման վայրից մեկնելու և աշխատանքի հիմնական վայր վերադառնալու օրերը նշվում են գործուղման վկայականում: Եթե աշխատողը գործուղվում է մեկից ավելի վայրեր, ապա գործուղման վկայականում նշվում են յուրաքանչյուր վայր ժամանելու և այդ վայրից մեկնելու օրերը, որը կոնկրետ կազմակերպություն (կազմակերպություններ) գործուղվելու դեպքում պետք է ստորագրվի տվյալ կազմակերպության (կազմակերպությունների) պաշտոնատար անձի կողմից և վավերացվի տվյալ կազմակերպության (կազմակերպությունների) կնիքով, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում պետք է նշվի նրա պետական գրանցման վկայականի համարը:

(4-րդ կետը լրաց. 16.10.08 N 1243-Ն, փոփ. 27.04.17 N 428-Ն)

5.*(կետն ուժը կորցրել է 24.08.06 N 1422-Ն)*

6. Գործուղման մեկնելու օր է համարվում աշխատողի աշխատանքի հիմնական վայրից մեկնելու օրը, իսկ վերադառնալու օրը՝ աշխատանքի հիմնական վայր ժամանելու օրը:

(6-րդ կետը փոփ. 27.04.17 N 428-Ն)

7. Գործուղված աշխատողին հատուցվում է օրապահիկը, գիշերավարձը, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը, ճանապարհին հարկադրական կանգառի ժամանակ հյուրանոցներում և համանման օբյեկտներում տեղերն ամրագրելու վճարը, պետական տուրքերը, մուտքի արտոնագրի ձևակերպման հետ կապված ծախսերը, ինչպես նաև գործուղման հետ կապված կապի (հեռախոս, ֆաքս, ինտերնետ ծառայություն), փաստաթղթերի թարգմանության և վավերացման, գործուղման հետ կապված այլ ծախսեր՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Աշխատանքի հիմնական վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը:

Աշխատանքի հիմնական վայրից 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ վայր մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում են օրապահիկը և աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայր (վայրեր) մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը:

Գործատուի կողմից հատուցման ենթակա չեն հրավիրող կողմի միջոցներից կամ այլ աղբյուրներից լրիվ ֆինանսավորման դեպքում կատարված ծախսերը: Հրավիրող կողմի միջոցներից կամ այլ աղբյուրներից ծախսերի մասնակի ֆինանսավորման դեպքում հատուցման ենթակա գումարի տարբերությունը գործուղվող աշխատողին վճարվում է գործատուի կողմից, որը պետական և համայնքի բյուջեներից ֆինանսավորման դեպքում չի կարող գերազանցել սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված չափերը (գիշերավարձի և օրապահիկի համար):

(7-րդ կետը փոփ., լրաց. 24.08.06 N 1422-Ն, խմբ. 16.10.08 N 1243-Ն, փոփ., լրաց. 27.04.17 N 428-Ն)

8. Գործուղված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում աշխատողը գործատուի անհատական իրավական ակտի համաձայն գործուղումից հետ է կանչվում: Գործուղվող աշխատողին ընդհանուր հիմունքներով վճարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ, իսկ գործուղման չաշխատած օրերի համար վճարված գիշերավարձի և օրապահիկի գումարները հետ են գանձվում:

(8-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն)

9. Գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

(9-րդ կետը փոփ. 24.08.06 N 1422-Ն, լրաց. 27.04.17 N 428-Ն)

10. Ոչ պետական և ոչ համայնքի բյուջեներից ֆինանսավորման դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և օտարերկրյա պետություններ գործուղման դեպքում գործուղման ծախսերի՝ սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված չափերը համարվում են նվազագույն չափեր:

(10-րդ կետը խմբ. 24.08.06 N 1422-Ն, լրաց. 16.10.08 N 1243-Ն)

II. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

11. Սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված օրապահիկի ծախսերի չափերը պետական և համայնքի բյուջեներից ֆինանսավորման դեպքում համարվում են նվազագույն և առավելագույն չափեր, գիշերավարձի ծախսերի

չափերը՝ առավելագույն չափեր:

Գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո գիշերավարձի ծախսերը հատուցվում են փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, որը պետական և համայնքի բյուջեներից ֆինանսավորման դեպքում չի կարող գերազանցել սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված չափերը, բացառությամբ սույն կարգի 13-րդ կետով նախատեսված դեպքի, իսկ այդպիսի փաստաթղթերի բացակայության դեպքում հատուցման ենթակա է սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված չափի 70 տոկոսը, որը համարվում է նվազագույն չափ: Գործուղված աշխատողին վճարված գումարի և հատուցման ենթակա գումարի տարբերությունը վերադարձվում է գործատուին:

(11-րդ կետը խմբ. 24.08.06 N 1422-Ն, լրաց. 10.01.13 N 8-Ն, 27.04.17 N 428-Ն)

12. Գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են այն պետական մարմին, որտեղից գործուղվել է տվյալ անձը: Պետական մարմինը դրանք ընդունելուց և ուսումնասիրելուց հետո, ծախսերը հիմնավոր համարելու դեպքում՝ գործուղման ֆինանսավորումն իրականացնելու նպատակով, բյուջեների կատարման կարգը սահմանող ընթացակարգերով նախատեսվող վճարումները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

(12-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն)

13. Գիշերավարձի և օրապահիկի ծախսերը հատուցվում են սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված չափերով: Եթե գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջ է սահմանվում, ապա գիշերավարձի ծախսերի հատուցումը կատարվում է փաստացի կատարված ծախսերի, այդ թվում՝ նաև ամրագրումը հաստատող փաստաթղթերի համաձայն:

(13-րդ կետը փոփ. 24.08.06 N 1422-Ն, 10.01.13 N 8-Ն)

14. Ճանապարհածախսի հետ միասին հատուցվում են նաև մեկնման ապահովագրության գծով կատարվող ծախսերը, այդ թվում՝ նաև ճանապարհածախսը հրավիրող կողմի հաշվին հատուցվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում պաշտոնական պատվիրակությունների սրահներից օգտվելու ծախսերը, տարանցիկ չվերթի ժամանակ օտարերկրյա օդանավակայանների միջև, ինչպես նաև օդանավակայանից կամ երկաթուղային կայարանից մինչև հյուրանոց ճանապարհածախսը: Նշված գործուղումների ճանապարհածախսի գծով կատարված այլ լրացուցիչ ծախսերը չեն հատուցվում, եթե համապատասխան անհատական իրավական ակտը հատուցման այդպիսի պահանջ չի սահմանում:

(14-րդ կետը փոփ. 06.10.11 N 1466-Ն, 10.01.13 N 8-Ն)

15. Ճանապարհածախսը հաստատող փաստաթղթեր են համարվում տրանսպորտային միջոցի տոմսի պատճենը, դրա բացակայության դեպքում ծառայություն մատուցած ընկերության կողմից տրամադրված՝ գործուղվողի մեկնման վերաբերյալ համապատասխան հաստատող փաստաթուղթը, մեկնման ապահովագրական վճարումը հիմնավորող փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում պաշտոնական պատվիրակությունների սրահներից օգտվելու ծախսը հաստատող փաստաթուղթը:

(15-րդ կետը փոփ. 06.10.11 N 1466-Ն)

16. Գիշերավարձից բացի, հյուրանոցային այլ ծառայություններից օգտվելու ծախսերը, համապատասխան անհատական իրավական ակտի փաստացի ծախսերի վճարման պահանջ սահմանելու դեպքում, հաստատող փաստաթղթի առկայությամբ կարող են հատուցվել գործուղված անձի՝ նույն գործուղման գիշերավարձի փաստացի վճարման ենթակա ընդհանուր գումարի 5 տոկոսից ոչ ավելի չափով:

(16-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն)

17. Գործուղման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու ժամանակ տարանցիկ վայրում հարկադրաբար կանգառի դեպքում նույն վայրում կատարված ծախսերը հատուցվում են տվյալ երկրի գիշերավարձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

18. Գիշերավարձը հատուցելու դեպքում հաստատող փաստաթուղթ է համարվում տվյալ անձի հյուրանոցում գտնվելու գործուղման ժամանակահատվածը հաստատող հյուրանոցի կողմից տրված փաստաթուղթը և գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) կամ գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) և հյուրանոցային նախնական ամրագրման փաստաթուղթը: Գիշերավարձը հաստատող փաստաթուղթն այն ստացող պետական մարմնի պահանջով կարող է թարգմանվել և վավերացվել: Թարգմանության և վավերացման ծախսերը համապատասխան անհատական իրավական ակտի համաձայն ենթակա են հատուցման տվյալ մարմնի պահպանման ծախսերի շրջանակներում:

(18-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն, խմբ. 05.09.13 N 950-Ն)

19. Գործուղման ծախսերի հատուցման գումարների հաշվարկները կատարվում են գործուղման մասին անհատական իրավական ակտի արձակման օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվարկների կատարման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ-ի դոլարի կամ եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքին համապատասխան:

Գործուղման ծախսերի հատուցման գումարների վերջնահաշվարկը կատարվում է գործուղման փաստացի ծախսերի մասին հաշվետվությունը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանակումը հաստատող փաստաթղթով սահմանված փոխարժեքով, այդպիսի փաստաթղթի բացակայության դեպքում՝ վերջնահաշվարկի

կատարման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ-ի դոլարի կամ եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքին համապատասխան, իսկ ծախսերը հաստատող փաստաթղթերն այլ տարադրամով ներկայացվելու դեպքում՝ տվյալ տարադրամի գծով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

(19-րդ կետը խմբ. 24.08.06 N 1422-Ն, փոփ. 08.11.07 N 1318-Ն, 06.10.11 N 1466-Ն, 10.01.13 N 8-Ն)

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ

(վերնագիրը լրաց. 16.10.08 N 1243-Ն)

20.***(կետն ուժը կորցրել է 24.08.06 N 1422-Ն)***

21. Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղման մեկնած աշխատողին գործուղում մեկնելուց առաջ օրապահիկը վճարվում է ամբողջությամբ, գիշերավարձը և ճանապարհածախսը՝ սույն կարգով սահմանված նվազագույն գումարի չափով: Պետական և համայնքի բյուջեների միջոցներից հատկացվող օրապահիկի ծախսերի չափը՝ 3000 դրամը, համարվում է նվազագույն, որը նաև առավելագույն է: Գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացվելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում հատուցման ենթակա է համարվում գիշերավարձի և ճանապարհածախսի գումարի տարբերությունը, բայց ոչ ավելի, քան սույն կարգով սահմանված առավելագույն չափը:

(21-րդ կետը լրաց. 24.08.06 N 1422-Ն, լրաց., փոփ. 16.10.08 N 1243-Ն, 10.01.13 N 8-Ն, 27.04.17 N 428-Ն)

22. Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղվող աշխատողի համար ճանապարհածախսի նվազագույն չափ է համարվում աշխատանքի հիմնական վայրից դեպի գործուղման վայր հասնելու համար անհրաժեշտ գործող միջմարզային կամ միջպետական ավտոբուսային երթուղիների սակագները: Պետական և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորման դեպքում առավելագույն չափ է համարվում միկրոավտոբուսային համապատասխան երթուղու սակագինը, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն օդային ճանապարհով երթևեկելու դեպքում՝ օդանավի տոմսի արժեքը::

(22-րդ կետը խմբ. 24.08.06 N 1422-Ն, 16.10.08 N 1243-Ն, լրաց. 10.01.13 N 8-Ն, փոփ. 27.04.17 N 428-Ն)

23. Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության աշխատողների գործուղման ծախսերը, Հայաստանի Հանրապետության Նախագահի ամառային և ձմեռային արձակուրդների ժամանակ, հատուցվում են փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի համաձայն:

24. Առանձին դեպքերում՝ պատճառաբանված հիմնավորումների առկայության պայմաններում, Հայաստանի Հանրապետության տարածքում բյուջետային հիմնարկների աշխատողների գործուղման ծախսերը հատուցվում են փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի համաձայն՝ գործուղումը նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

(24-րդ կետը փոփ. 10.01.13 N 8-Ն)

(հավելվածը փոփ., լրաց., խմբ. 24.08.06 N 1422-Ն, փոփ. 08.11.07 N 1318-Ն, լրաց., խմբ., փոփ. 16.10.08 N 1243-Ն, փոփ. 06.10.11 N 1466-Ն, փոփ., լրաց. 10.01.13 N 8-Ն, խմբ. 05.09.13 N 950-Ն, փոփ., լրաց. 27.04.17 N 428-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Օրապահիկի ծախսերի չափը (դրամ)	Գիշերավարձի չափը (դրամ)			
	նվազագույնը	առավելագույնը (պետական և համայնքային բյուջեների միջոցներից) հատկացվող ծախսերի)		
		ԼՂՀ	ՀՀ տարածք	Երևան
3000	5000	15000	20000	25000

(աղյուսակը խմբ. 10.01.13 N 8-Ն)

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ

	Երկրները	Օրապահիկի ծախսերի չափը		Գիշերավարձի ծախսերի չափը (մեկ օրվա համար)	
N/N ը/կ		եվրո	ԱՄՆ-ի դոլար	եվրո	ԱՄՆ-ի դոլար
1	2	3	4	5	6
1.	ԱԼԲԱՆԻԱ				
	Տիրանա		55		111
	տարածք		39		43
2.	ԱԼԺԻՐ				
	Ալժիր		171		280
	տարածք		68		79
3.	ԱՄՆ				
	Վաշինգտոն		145		218
	Նյու Յորք (առաջին 30 օր)		129		249
	Նյու Յորք (հաջորդ 30 օր)		109		212

	Լոս Անջելես		94		191
	ԱՄՆ (տարածք)		81		181
4.	ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍԱՄՈԱ		46		85
5.	ԱՆԳԻԼԻԱ (15.12-14.04)		146		239
	ԱՆԳԻԼԻԱ (15.04-14.12)		142		195
6.	ԱՆԳՈԼԱ				
	Լուանդա		144		307
	տարածք		53		62
7.	ԱՆՏԻԳՈՒԱ				
	Անտիգուա		100		137
8.	ԱՎՍՏՐԱԼԻԱ				
	Կանբերա, Մելբուրն, Սիդնեյ		160		204
	տարածք		171		177
9.	ԱՎՍՏՐԻԱ	112		104	
10.	ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
	Աբու Դաբի		172		281
	տարածք		123		229
11.	ԱՐԳԵՆՏԻՆԱ				
	Բուենոս Այրես		181		189
	տարածք		111		62
12.	ԱՐՈՒԲԱ (15.04-15.12)		127		215

	ԱՐՈՒԲԱ (16.12-14.04)		142		330
13.	ԱՖՂԱՆՍՏԱՆ				
	Քաբուլ		48		136
	տարածք		30		57
14.	ԲԱՆԳԼԱԴԵՇ				
	Դակա		44		99
	տարածք		20		33
15.	ԲԱՐԲԱԴՈՍ (16.04-15.12)		131		189
	ԲԱՐԲԱԴՈՍ (16.12-15.04)		140		220
16.	ԲԱՀԱՄՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (21.04-19.12)		153		203
	ԲԱՀԱՄՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (20.12-20.04)		159		248
17.	ԲԱՀՐԵՅՆ		96		223
18.	ԲԵԼԳԻԱ	117		192	
19.	ԲԵԼԻԶ				
	Բելիզ		108		137
	տարածք		77		99
20.	ԲԵՆԻՆ				
	Պորտո-Նովո		38		44
	տարածք		35		25
21.	ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (01.12-14.12)		129		330

	ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (15.03-30.11)		143		367
22.	ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՎԻՐՋԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (15.12-15.04)		131		234
	ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՎԻՐՋԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (16.04-14.12)		124		202
23.	ԲՈԼԻՎԻԱ				
	Լա Պաս		60		103
	տարածք		42		48
24.	ԲՈՍՆԻԱ ԵՎ ՀԵՐՑՈԳՈՎԻՆԱ				
	Սարայեվո		95		95
	տարածք		50		55
25.	ԲՈՏՍՎԱՆԱ				
	Գաբորոնե		89		199
	տարածք		67		78
26.	ԲՐԱԶԻԼԻԱ				
	Բրազիլիա		90		167
	տարածք		62		93
27.	ԲՐՈՒՆԵՅ				
	Բանդար-Սերի-Բագավան		72		167
28.	ԲՈՒԹԱՆ				
	Թխիմփխու		49		86
	տարածք		36		47

29.	ԲՈՒԼՂԱՐԻԱ				
	Սոֆիա		89		158
	տարածք		46		51
30.	ԲՈՒՐԿԻՆԱ ՖԱՍՈ				
	Ուազադուգու		98		131
	տարածք		50		47
31.	ԲՈՒՐՈՒՆԴԻ				
	Բուժումբուրա		93		139
	տարածք		30		12
32.	ԳԱԲՈՆ				
	Լիբրեվիլ		142		148
	տարածք		49		66
33.	ԳԱՄԲԻԱ				
	Բանժուլ		84		117
	տարածք		17		17
34.	ԳԱՅԱՆԱ				
	Ջորջթաուն		82		123
	տարածք		35		41
35.	ԳԱՆԱ				
	Ակրա		73		156
	տարածք		46		74

36.	ԳԵՐՄԱՆԻԱ				
	Բեռլին	116		160	
	տարածք	82		113	
37.	ԳՎԱՏԵՄԱԼԱ				
	Գվատեմալա		98		98
	տարածք		79		76
38.	ԳՎԻՆԵԱ				
	Կոնակրի		152		129
	տարածք		41		37
39.	ԳՎԻՆԵԱ - ԲԻՍԱՈՒ				
	Բիսաու		109		164
	տարածք		58		74
40.	ԳՐԵՆԱԴԱ (15.12-15.04)		126		174
	ԳՐԵՆԱԴԱ (16.04-14.12)		120		124
41.	ԳՈՒԱՄ		104		211
42.	ԴԱՆԻԱ		163		207
43.	ԴՈՄԻՆԻԿԱ		114		145
44.	ԴՈՄԻՆԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Սանտո-Դոմինգո		79		147
	տարածք		28		32
45.	ԵԳԻՊՏՈՍ				

	Կահիրե		107		148
	տարածք		15		100
46.	ԵԹՈՎՊԻԱ				
	Ադիս Աբեբա		59		101
	տարածք		25		35
47.	ԵՄԵՆ				
	Սանա		62		89
	տարածք		50		33
48.	ԶԱՄԲԻԱ				
	Լուսակա		82		166
	տարածք		37		66
49.	ԶԻՄԲԱԲՎԵ				
	Խարարե		70		105
	տարածք		52		72
50.	ԷԿՎԱԴՈՐ				
	Կիտո		97		101
	տարածք		39		52
51.	ԷՍՏՈՆԻԱ				
	Տալլին	89		92	
	տարածք	62		60	
52.	ԷՐԻԹՐԵԱ				

	Ասմերա		74		41
	տարածք		47		26
53.	ԹԱԻԼԱՆԴ				
	Բանգկոկ		115		134
	տարածք		31		34
54.	ԹԵՐՔՍ ԵՎ ՔԱՅԿՈՍ		128		201
55.	ԹԻՄՈՐ ԼՈՐՈՍԵ				
	Դիլի		48		96
	տարածք		18		29
56.	ԹՈՒՆԻՍ				
	Թունիս		86		115
	տարածք		79		93
57.	ԹՈՒՐՔԻԱ				
	Անկարա		90		110
	Ստամբուլ		116		168
	տարածք		71		80
58.	ԻՆԴՈՆԵԶԻԱ				
	Ջակարտա		67		97
	տարածք		44		48
59.	ԻՌԼԱՆԴԻԱ	90		134	
60.	ԻՍԼԱՆԴԻԱ (հոկտ.- ապրիլ)		114		90

	ԻՍԼԱՆԴԻԱ (մայիս-սեպտ.)		128		191
61.	ԻՍՊԱՆԻԱ				
	Մադրիդ	98		125	
	տարածք	71		84	
62.	ԻՍՐԱՅԵԼ				
	Թել Ավիվ		130		276
	Երուսաղեմ		107		167
	տարածք		101		166
63.	ԻՏԱԼԻԱ				
	Հռոմ	136		167	
	տարածք	62		70	
64.	ԻՐԱՆ				
	Թեհրան		77		149
	տարածք		52		82
65.	ԻՐԱՔ				
	Բաղդադ		115		243
	տարածք		87		203
66.	ԼԱՈՍ				
	Վյենտյան		54		89
	տարածք		23		19
67.	ԼԱՏՎԻԱ				

	Ռիգա		90		152
	տարածք		75		108
68.	ԼԵՀԱՍՏԱՆ				
	Վարշավա		126		161
	տարածք		91		170
69.	ԼԵՍՈԹՈ				
	Մասերու		45		76
	տարածք		45		46
70.	ԼԻԲԱՆԱՆ				
	Բեյրութ (01.01-14.07)		104		177
	Բեյրութ (15.07-31.12)		125		320
	տարածք		68		77
71.	ԼԻԲԵՐԻԱ				
	Մոնրովիա		93		139
	տարածք		31		27
72.	ԼԻԲԻԱ				
	Տրիպոլի		67		143
	տարածք		61		100
73.	ԼԻԽՏԵՆՇՏԱՅՆ		54		45
74.	ԼԻՏՎԱ				
	Վիլնյուս		108		132

	տարածք		60		101
75.	ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ	96		179	
76.	ԽՈՐՎԱԹԻԱ				
	Զագրեբ		94		129
	տարածք		71		107
77.	ԿԱԲՈ-ՎԵՐԴԵԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Պրայա		150		128
	տարածք		97		65
78.	ԿԱՄԵՐՈՒՆ				
	Յաունդե		119		119
	տարածք		80		45
79.	ԿԱՄԲՈՋԱ				
	Պնոմպեն		55		69
	տարածք		25		34
80.	ԿԱՆԱԴԱ				
	Օտավա		155		189
	տարածք		104		138
81.	ԿԱՆԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ	63		91	
82.	ԿԱՏԱՐ		171		227
83.	ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Բանգի		77		87

	տարածք		25		13
84.	ԿԻՊՐՈՍ				
	Նիկոսիա	88		116	
	տարածք	64		84	
85.	ԿԻՐԻԲԱԹԻ				
	Ծննդյան կղզի		131		174
	տարածք		54		121
86.	ԿՈԼՈՒՄԲԻԱ				
	Բոգոտա		73		179
	տարածք		34		75
87.	ԿՈՄՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ				
	Մորոնի		87		136
	տարածք		59		62
88.	ԿՈՅՄԱՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (01.12-30.04)		113		275
	ԿՈՅՄԱՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (01.05-30.11)		101		235
89.	ԿՈՆԳՈ				
	Բրազավիլ		151		163
	տարածք		83		62
90.	ԿՈՆԳՈՅԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԶԱԻՐ)				
	Կինշասա		119		157

	տարածք		55		58
91.	ԿՈՍՏԱ ՌԻԿԱ				
	Սան Խոսե		92		138
	տարածք		60		66
92.	ԿՈՏ Դ' ԻՎՈՒԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Յամուսուկրո		121		143
	տարածք		54		45
93.	ԿՈՐԵԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Փխենյան		102		106
	տարածք		39		72
94.	ԿՈՒԲԱ				
	Հավանա		70		119
	տարածք		40		46
95.	ԿՈՒԿԻ ԿՂԶԻՆԵՐ				
	Ռարոտոնգա		58		134
	տարածք		10		66
96.	ՀԱԻԹԻ				
	Պորտ-օ-Պրենս		107		137
	տարածք		33		74
97.	ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՎԻՆԵԱ				

	Մալաբո		107		238
	տարածք		61		100
98.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ				
	Սեուլ		195		195
	տարածք		87		87
99.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ				
	Խարթում		72		133
	տարածք		41		32
100.	ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Պրետորիա		96		185
	տարածք		74		126
101.	ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ				
	Ջուբա		54		110
	տարածք		41		32
102.	ՀՆԴԿԱՍՏԱՆ				
	Դելի (ապրիլ-օգոստոս)		51		120
	Դելի (սեպտեմբեր-մարտ)		57		146
	տարածք		51		126
103.	ՀՈՆԴՈՒՐԱՍ				
	Տեգուսիգալպա		79		109
	տարածք		44		50

104.	ՀՈՆԿՈՆԳ		153		239
105.	ՀՈՐԴԱՆԱՆ				
	Աման		89		158
	տարածք		89		157
106.	ՀՈՐԴԱՆԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՓ				
	Ջերիկո		74		120
	Գազայի հատված		92		100
	տարածք		63		68
107.	ՀՈՒՆԱՍՏԱՆ				
	Աթենք	98		146	
	տարածք	56		80	
108.	ՀՈՒՆԳԱՐԻԱ		114		202
109.	ՃԱՊՈՆԻԱ				
	Տոկիո		166		220
	տարածք		101		129
110.	ՄԱԴԱԳԱՍԿԱՐ				
	Անտանանարիվու		87		130
	տարածք		22		22
111.	ՄԱԼԱՎԻ				
	Լիլոնգվե		73		125
	տարածք		54		74

112.	ՄԱԼԱԶԻԱ				
	Կուալա-Լումպուր		105		133
	տարածք		66		98
113.	ՄԱԼԴԻՎՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Մալե		90		167
	տարածք (մայիս-հուլիս)		104		184
	տարածք (օգոստոս-ապրիլ)		133		284
114.	ՄԱԼԹԱ	103		120	
115.	ՄԱԼԻ				
	Բամակո		135		94
	տարածք		81		63
116.	ՄԱԿԱՈ		91		142
117.	ՄԱՎՐԻԿԻ				
	Պորտ Լուի		106		180
	տարածք		17		113
118.	ՄԱՎՐԻՏԱՆԻԱ				
	Նուակշոտ		73		109
	տարածք		40		39
119.	ՄԱՐՇԱԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ				
	Մաջուրո		69		133
	տարածք		76		48

120.	ՄԱՐՈԿԿՈ				
	Ռաբատ		110		165
	տարածք		66		88
121.	ՄԱԿԵԴՈՆԻԱ				
	Սկոպյե		65		126
	տարածք		47		63
122.	ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (Լոնդոն)				
	Լոնդոն		145		281
	տարածք		90		222
123.	ՄԵՔՍԻԿԱ				
	Մեխիկո		124		185
	տարածք		63		83
124.	ՄԻԿՐՈՆԵԶԻԱ				
	Կոսրաե		74		127
	Պոնապե		76		96
	Տրուկ		72		118
	Յապ		83		214
	տարածք		4		22
125.	ՄՅԱՆՄԱ				
	Յանգոն		43		60
	տարածք		27		46

126.	ՄՈԶԱՄԲԻԿ				
	Մապուտու		108		137
	տարածք		39		49
127.	ՄՈՆԱԿՈ	110		158	
128.	ՄՈՆՂՈԼԻԱ				
	Ուլան Բատոր		52		97
	տարածք		28		32
129.	ՄՈՆՍԵՐԱՏ		99		142
130.	ՄՈՆՏԵՆԵԳՐՈ				
	Պոդգորիցա	57		105	
	տարածք	36		45	
131.	ՆԱՄԻԲԻԱ				
	Վինդհուկ		61		109
	տարածք		39		49
132.	ՆԱՈՒՐՈՒ		88		204
133.	ՆԵՊԱԼ				
	Կատմանդու		56		96
	տարածք		16		25
134.	ՆԻԳԵՐ				
	Նիամեյ		66		108
	տարածք		58		68

135.	ՆԻԳԵՐԻԱ				
	Աբուջա		87		194
	տարածք		38		57
136.	ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ	125		140	
137.	ՆԻԴԵՐԼԱՆԴՅԱՆ ԱՆՏԻԼՆԵՐ				
	Կուրասաո (15.04-15.12)		102		180
	Կուրասաո (16.12-14.04)		110		235
138.	ՆԻԿԱՐԱԳՈՒԱ				
	Մանագուա		73		110
	տարածք		43		62
139.	ՆԻՈՒԵ		68		175
140.	ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ				
	Վելինգտոն		138		127
	տարածք		93		110
141.	ՆՈՐՎԵԳԻԱ		193		193
142.	ՇՎԵԴԻԱ				
	Ստոկհոլմ		196		334
	տարածք		158		257
143.	ՇՎԵՅՑԱՐԻԱ		210		257
144.	ՇՐԻ ԼԱՆԿԱ				
	Կոլոմբո		75		133

	տարածք		37		48
145.	ՉԱԴ				
	Նջամենա		134		128
	տարածք		50		64
146.	ՉԵԽԻԱ				
	Պրահա		81		150
	տարածք		26		52
147.	ՉԻԼԻ				
	Սանտիագո		107		130
	տարածք		81		112
148.	ՉԻՆԱՍՏԱՆ				
	Պեկին		119		123
	տարածք		58		86
149.	ՊԱԼԱՈՒ		96		137
150.	ՊԱԿԻՍՏԱՆ				
	Իսլամաբադ		67		164
	տարածք		40		50
151.	ՊԱՆԱՄԱ				
	Պանամա		89		139
	տարածք		42		35
152.	ՊԱՊՈՒԱ ՆՈՐ ԳՎԻՆԵԱ				

	Պորտ Մորսբի		128		347
	տարածք		56		71
153.	ՊԱՐԱԳՎԱՅ				
	Ասունսյոն		82		119
	տարածք		44		75
154.	ՊԵՐՈՒ				
	Լիմա		96		138
	տարածք		64		57
155.	ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	102		136	
156.	ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ (20.12-30.04)		116		312
	ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ (01.12-20.12)		106		259
157.	ՋԱՄԱՅԿԱ				
	Քինգստոն		94		160
	տարածք (16.04-14.12)		30		220
	տարածք (15.12-15.04)		37		248
158.	ՋԻԲՈՒԹԻ				
	Ջիբութի		72		84
	տարածք		47		57
159.	ՌՈՒԱՆԴԱ				
	Կիգալի		58		143
	տարածք		27		43

160.	ՌՈՒՄԻՆԻԱ				
	Բուխարեստ		102		120
	տարածք		57		70
161.	ՍԱԼՎԱԴՈՐ				
	Սան Սալվադոր		93		119
	տարածք		48		47
162.	ՍԱՄՈԱ				
	Ապիա		90		153
	տարածք		89		199
163.	ՍԱՆ ՏՈՄԵ ԵՎ ՊՐԻՆՍԻՊԻ				
	Սան Տոմե		58		77
	տարածք		61		58
164.	ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ				
	Էր-Ռիադ		166		250
	տարածք		85		128
165.	ՍԵՅՇԵԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ		123		201
166.	ՍԵՆԵԳԱԼ				
	Դակար		107		190
	տարածք		52		62
167.	ՍԵՆԹ ԼՅՈՒՍԻԱ (15.04-14.12)		115		166
	ՍԵՆԹ ԼՅՈՒՍԻԱ (15.12-14.04)		119		211

168.	ՍԵՆԹ ՎԻՆՍԵՆԹ-ԳՐԵՆԱԴԻՆ (15.04-14.12)		121		112
	ՍԵՆԹ ՎԻՆՍԵՆԹ-ԳՐԵՆԱԴԻՆ (15.12-14.04)		124		146
169.	ՍԵՆԹ ՔԻԹՍ ԵՎ ՆԵՎԻՍ (15.04-14.12)		103		130
	ՍԵՆԹ ՔԻԹՍ ԵՎ ՆԵՎԻՍ (15.12-14.04)		110		146
170.	ՍԵՐԲԻԱ				
	Բելգրադ		114		151
	տարածք		52		66
171.	ՍԻԵՐԱ ԼԵՈՆ				
	Ֆրիթաուն		75		129
	տարածք		26		30
172.	ՍԻՆԳԱՊՈՒՐ		188		295
173.	ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
	Դամասկոս		97		189
	տարածք		83		93
174.	ՍԼՈՎԱԿԻԱ				
	Բրատիսլավա	86		115	
	տարածք	78		103	
175.	ՍԼՈՎԵՆԻԱ				
	Լյուբլյանա	66		139	
	տարածք	60		106	

176.	ՍՈՄԱԼԻ				
	Մոգադիշո		23		155
	տարածք		23		30
177.	ՍՈԼՈՄՈՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ				
	Հոնիարա		151		109
	տարածք		39		45
178.	ՍՎԱԶԻԼԵՆԴ				
	Մբաբանե		73		162
	տարածք		57		92
179.	ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ				
	Մուսքաթ		102		197
	տարածք		79		109
180.	ՍՈՒՐԻՆԱՄ				
	Պարամարիբո		78		118
	տարածք		43		59
181.	ՎԱՆՈՒԱՏՈՒ				
	Պորտ Վիլա		90		183
	տարածք		51		53
182.	ՎԵՆԵՍՈՒԵԼԱ				
	Կարակաս		141		212
	տարածք		70		60
183.	ՎԻԵՏՆԱՄ				

	Հանոյ		62		102
	տարածք		33		46
184.	ՎԻՐՋԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (01.05-14.12)		120		204
	ՎԻՐՋԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (15.12-30.04)		123		240
185.	ՏԱՆԶԱՆԻԱ				
	Դար-Էս-Սալամ		69		124
	տարածք		32		53
186.	ՏՈԳՈ				
	Լոմե		76		129
	տարածք		48		33
187.	ՏՈԿԵԼԱՈՒ		36		80
188.	ՏՈՆԳԱ				
	Նուկուալոֆա		96		235
	տարածք		69		46
189.	ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈ				
	ՏՈԲԱԳՈ (15.04-15.12)		138		155
	ՏՈԲԱԳՈ (16.12-14.04)		145		200
	ՏՐԻՆԻԴԱԴ տարածք		120		196
190.	ՏՈՒՎԱԼՈՒ				
	Ֆունաֆուտի		49		127
	տարածք		77		56
191.	ՈՒԳԱՆԴԱ				

	Կամպալա		51		147
	տարածք		31		69
192.	ՈՒՐՈՒԳՎԱՅ				
	Մոնտեվիդեո		105		140
	տարածք		54		81
193.	ՔԵՆԻԱ				
	Նայրոբի		108		192
	տարածք		13		86
194.	ՔՈՒՎԵՅԹ		119		252
195.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ				
	Մանիլա		82		133
	տարածք		25		51
196.	ՖԻՆԼԱՆԴԻԱ				
	Հելսինկի	82		167	
	տարածք	87		115	
197.	ՖԻՋԻ				
	Սուվա		55		76
	տարածք		48		57
198.	ՖՐԱՆՍԻԱ				
	Փարիզ	130		153	
	տարածք	101		114	

199.	ԱՊՀ անդամ երկրներ				
200.	ԱԴՐԲԵՋԱՆ				
	Բաքու		95		125
	տարածք		39		77
201.	ԲԵԼԱՌՈՒՍ				
	Մինսկ		89		166
	տարածք		61		71
202.	ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ				
	Աշխաբադ		64		114
	տարածք		40		60
203.	ՂԱԶԱԽՍՏԱՆ				
	Աստանա		131		161
	տարածք		59		106
204.	ՂՐՂԶՍՏԱՆ				
	Բիշքեկ		61		143
	տարածք		27		30
205.	ՄՈԼԴՈՎԱ				
	Քիշնև		76		130
	տարածք		73		90
206.	ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ				
	Մոսկվա		171		304

	Սանկտ Պետերբուրգ		77		164
	Սոչի (01.06-15.10)		110		246
	Սոչի (16.10-31.05)		97		152
	Դոնի Ռոստով		62		111
	տարածք		51		94
207.	ՎՐԱՍՏԱՆ				
	Թբիլիսի		87		94
	տարածք		55		75
208.	ՏԱՋԻԿՍՏԱՆ				
	Դուշանբե		65		115
	տարածք		25		21
209.	ՈՒԶԲԵԿՍՏԱՆ				
	Տաշքենդ		71		101
	տարածք		24		34
210.	ՈՒԿՐԱԻՆԱ				
	Կիև		110		165
	տարածք		59		76

(հավելվածը խմբ. 16.10.08 N 1243-Ն, 06.10.11 N 1466-Ն, 10.01.13 N 8-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Գ Ո Ր Ծ Ո Ւ Ղ Մ Ա Ն Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն
(օրինակելի ձև)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)
_____
_____

Գործուղվում է _____
(գործուղման վայրը, կազմակերպությունը)

Հրաման N _____ ____ _____ 200 թ.

Գործուղման նպատակը _____

Գործուղման ժամկետը _____ օր մինչև ____ _____ 200 թ.

մեկնել է _____ ժամանել է _____

____ _____ 200 թ. ____ _____ 200 թ.

Կ.Տ. _____ Կ.Տ. _____
(կամ պետական գրանցման վկայականի համարը) (կամ պետական գրանցման վկայականի համարը)

_____ _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

մեկնել է _____ ժամանել է _____

____ _____ 200 թ. ____ _____ 200 թ.

Կ.Տ. _____ Կ.Տ._____
(կամ պետական գրանցման վկայականի համարը) (կամ պետական գրանցման վկայականի համարը)

_____ _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

(ձևը փոփ. 24.08.06 N 1422-Ն, 16.10.08 N 1243-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման պայմանները:

2. Օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողին, ինչպես նաև նրան ուղեկցող ընտանիքի անդամներին (բացի կուրսանտներից) Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն ուսման կամ ծառայության գործուղման վայր մեկնելիս և օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս տրանսպորտից (օդային, երկաթուղային, ավտոմոբիլային՝ բացառությամբ տաքսիների) օգտվելու համար տարեկան մեկ անգամ տրվում է ծախսերի փոխհատուցում (լրացուցիչ արձակուրդի դեպքում՝ նաև մեկից ավելի): Զորային ստաժավորումը (արտադրական պրակտիկան) հիմնական արձակուրդի հետ չհամընկնելու դեպքում տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են սահմանված կարգով:

4. Սույն կարգի համաձայն փոխհատուցման ենթակա են նաև զինծառայողի ընտանիքի անդամների կողմից (ամուսին, անչափահաս երեխաներ) կատարված տրանսպորտային ծախսերը:

5. Օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելիս կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս յուրաքանչյուր անձի հաշվով փոխհատուցվում են մինչև 30 կիլոգրամ ուղեբեռի տեղափոխման տրանսպորտային ծախսերը:

6. Օտարերկրյա պետությունում ուսման կամ ծառայության գործուղված զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում դին Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են մահացածի ընտանիքին:

7. Սույն կարգով սահմանված փոխհատուցումները տրվում են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

8. Տրանսպորտային ծախսերը հիմնավորող փաստաթղթեր են համարվում տրանսպորտային միջոցի տոմսը, դրա բացակայության դեպքում՝ ծառայություն մատուցած ընկերության կողմից տրամադրված՝ մեկնելու վերաբերյալ համապատասխան հաստատող փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետությունից մեկնելու համար ապահովագրական և ուղեբեռի վճարումները, ինչպես նաև դին տեղափոխելու ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

9. Օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղման համար հիմք ծառայած համաձայնագրերով զինծառայողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերն ընդունող կողմի միջոցների հաշվին իրականացվելու դեպքում՝ սույն որոշմամբ նախատեսված փոխհատուցումները չեն տրվում:

(հավելվածը լրաց. 10.09.09 N 1079-Ն)

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների՝ օտարերկրյա պետություններում բնակելի տարածության վարձակալության համար ծախսերի փոխհատուցման պայմանները:

2. Օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողին օտարերկրյա պետություններում բնակելի տարածության վարձակալության համար ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

3. Սույն կարգով սահմանված փոխհատուցումներն իրականացվում են հրավիրող կողմի ռազմաուսումնական հաստատությանը կից բնակելի ֆոնդի տրամադրման դեպքում՝ բնակելի ֆոնդի վարձավճարի չափով, իսկ նման ֆոնդի բացակայության դեպքում՝ զինծառայողի և սեփականատիրոջ միջև կնքված բնակելի տարածության վարձակալության պայմանագրով սահմանված վարձակալության չափով: Փոխհատուցման ամսական չափը չի կարող գերազանցել մայրաքաղաքներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող կցորդին բնակելի տարածության վարձակալության համար սահմանված գումարի չափը, իսկ այլ տարածքներում՝ դրա 70 տոկոսը:

(3-րդ կետը փոփ. 27.04.17 N 428-Ն)

4. Բնակելի տարածության վարձակալության դիմաց ծախսերը փոխհատուցվում են ծախսերը հիմնավորող և վճարումը հաստատող փաստաթղթերի (անդորրագիր, քաղվածք անձնական հաշվից, կտրոն և այլն) հիման վրա կազմված հաշվետվությունների համաձայն:

(հավելվածը լրաց. 10.09.09 N 1079-Ն, փոփ. 27.04.17 N 428-Ն)

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերի փոխհատուցման կարգը:

2. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու ծախսը (տոմսերի արժեքը) վճարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը նախատեսված միջոցների հաշվին:

3. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների պահպանման համար նախատեսված

միջոցների հաշվին:

4. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս դիվանագետին անվճար թույլատրվող ուղեբեռի քաշից ավելի բեռի համար վճարվում է փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, վճարման անդորրագիր ներկայացնելու դեպքում՝ դիվանագետին՝ 60 կիլոգրամ լրացուցիչ բեռի համար, ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 30 կիլոգրամ լրացուցիչ բեռի համար:

(հավելվածը լրաց. 10.09.09 N 1079-Ն)

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման

Չ Ա Փ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ

(վերնագիրը փոփ. 27.04.17 N 428-Ն)

(դրամ)

NN ը/կ	Օտարերկրյա պետության, քաղաքի անվանումները	Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, խորհրդական	Քարտուղարներ (առաջին, երկրորդ, երրորդ), կցորդ
1	2	3	4
1.	Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն)	1043307	966025
2.	Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք)	1043307	966025
3.	Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես)	908064	772820
4.	Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա)	770486	684876
5.	Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի)	579615	463692
6.	Արգենտինայի Հանրապետություն	579615	540974
7.	Բելառուսի Հանրապետություն (Մինսկ)	309128	270487
8.	Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)	799022	684876
9.	Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն (Բրազիլիա)	579615	540974

10.	Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն (Սան Պաուլո)	463692	405731
11.	Բուլղարիայի Հանրապետություն (Սոֆիա)	513657	456584
12.	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին)	884632	770486
13.	Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (Կահիրե)	386410	347769
14.	Թուրքիայի Հանրապետություն (Ստամբուլ)	483013	386410
15.	Թուրքմենստան (Աշխաբադ)	386410	309128
16.	Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ, Վալենսիա)	970241	856095
17.	Իտալիայի Հանրապետություն (Հռոմ)	856095	799022
18.	Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան)	456584	399511
19.	Իրաքի Հանրապետություն (Բաղդադ)	386410	347769
20.	Լեհաստանի Հանրապետություն (Վարշավա)	502333	386410
21.	Լիբանանի Հանրապետություն (Բեյրութ)	463692	386410
22.	Կանադա (Օտտավա)	695538	502333
23.	Հնդկաստանի Հանրապետություն (Դելի)	579615	444372
24.	Հունաստանի Հանրապետություն (Աթենք)	684876	627803
25.	Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)	425051	386410
26.	Ճապոնիա (Տոկիո)	1932050	1545640
27.	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն)	1266960	1140264
28.	Նիդերլանդների Թագավորություն (Ամստերդամ, Հաագա)	970241	913168
29.	Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)	1284143	1141460
30.	Չեխիայի Հանրապետություն (Պրահա)	770486	684876

31.	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին)	579615	444372
32.	Ռումինիայի Հանրապետություն (Բուխարեստ)	502333	386410
33.	Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)	734179	695538
34.	Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ)	463692	425051
35.	Ռուսաստանի Դաշնություն (Դոնի Ռոստով)	347769	309128
36.	Ռուսաստանի Դաշնություն (Սոչի)	579615	463692
37.	Սիրիայի Արաբական Հանրապետություն (Դամասկոս)	463692	386410
38.	Սիրիայի Արաբական Հանրապետություն (Հալեպ)	386410	347769
39.	Վրաստան (Թբիլիսի)	289808	251167
40.	Վրաստան (Բաթում)	309128	270487
41.	Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ)	386410	309128
42.	Ուկրաինա (Կիև)	502333	386410
43.	Քուվեյթի Պետություն	1545640	1159230
44.	Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)	1426825	1369752
45.	Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ)	770486	684876

(հավելվածը լրաց. 10.09.09 N 1079-Ն, խմբ. 04.03.10 N 239-Ն, փոփ. 27.04.17 N 428-Ն)